

Krone Verlag GmbH & Co. KG v. Austria, Application No. 34315/96, 2002, Կրոն Վերլագ ընկերությունն ընդդեմ Ավստրիայի(Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա: Այլ բովանդակային սահմանափակումներ, լրատվամիջոցների կարգավորում, ընդհանուր հարցեր

Ենթաթեմա: Մասնավոր կյանք, հեղինակային իրավունք, նախնական հսկողություն, խուզարկություն և արգելքներ

Թեսթը: Անհրաժեշտությունը

Սանկցիան: Միջանկյալ արգելք

Վճիռը: Արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ավստրիա

Գործի փաստական հանգամանքները.

Դիմումատուն թերթի հրատարակող է, որը մի քանի անգամ, 1995թ. ընթացքում հոդվածներ է տպագրել Պ-ի ֆինանսական դրության վերաբերյալ: Պ-ն ուսուցիչ է, որը նաև Ավստրիայի Ազգային ժողովի և Եվրոպական պարլամենտի անդամ է հանդիսացել: Հոդվածով պնդում էր արվում առ այն, որ վերջինս անօրինական ձևով երեք աշխատավարձ է ստացել, քանի որ Ավստրիական օրենսդրության համաձայն, նա իրավունք չունի ստանալու ուսուցչի աշխատավարձ, քանի դեռ Եվրոպարլամենտի անդամ էր: 1995թ. օգոստոսին Պ-ն դիմել է դատարան՝ միջնորդելով արգելք սահմանել դիմումատուի կողմից նրա նկարները հրապարակելու կապակցությամն՝ իր ֆինանսական դրության հրապարակման համատեքստում: Այս որոշումը դիմումատուի կողմից բողոքարկվել է երկու վերադաս դատարանները, սակայն դրանք մերժվել են:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Արգելքի կարգադրությամբ միջամտություն է դրսևորվել դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ: Դատարանը գտավ, որ միջամտությունը սահմանված էր օրենքով և հետապնդում էր այլոց իրավունքների պաշտպանության իրավաչափ նպատակ: Խնդրո առարկան այն հարցն էր, թե արդյոք այդ միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում: Դատարանը նշում է, որ “անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում” արտահայտությունը ենթադրում է «ճնշող հասարակական կարիքի» առկայություն: Դատարանը պետք է որոշի նաև, թե միջամտությունը համաչափ էր դրանով հետապնդվող նպատակին և արդյոք միջամտության արդարացման նպատակով ներկայացված պատճառները «վերաբերելի են եւ բավարար»: Դատարանը ընդգծել է նաև, որ քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ

քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Դատարանը նշեց, որ Պ-ի ֆինանսական դրության վերաբերյալ հողվածները անկասկած հանրային շահերին վերաբերող հարցի են վերաբերել, մասնավորապես, քանի որ հողվածներով պնդում էր արվում ընտրովի պաշտոնատար անձի ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ:

Ներպետական դատարանների հիմնավորումները Պ-ի լուսանկարի հրապարակման արգելքի առնչությամբ, հիմնականում կառուցվում էին հետևյալ փաստարկների շուրջ. վերջինիս լուսանկարների հրապարակումը վտանգում էին նրա՝ հասարակությունում ոչ անհատականացված մնալու շահը, նրա նկարը չունեի տեղեկատվական արժեք և որ պնդումների ճշմարտացիությունը դեր չի խաղում հեղինակային իրավունքի մասին օրենքի կիրառման տեսանկյունից: Այս հիմնավորումները ՄԻԵԴ-ը համարեց վերաբերելի, բայց ոչ բավարար:

Դատարանը մասնավորապես նշեց.

Ավստրիական դատարանները հաշվի չեն առել այն կենսական գործառույթը, որն ունի մամուլը ժողովրդավարական հասարակությունում և նրա հանրային շահերին վերաբերող հարցերի վերաբերյալ գաղափարներ և տեղեկատվություն տարածելու պարտականությունը: Ավելին, այնքան կարևորություն չունի այն հարցը թե արդյոք անձը կամ նրա լուսանկարը փաստացի հայտնի է հասարակությանը: Կարևոր է այն, թե այդ անձը արդյոք մտել է հասարակական դաշտ, քննարկվող գործը վերաբերում է քաղաքական գործիչի իր հանրային գործառույթի իրականացման համատեքստում:

Դատարանը գտնում է, որ դիմումատուին չպետք է արգելվեր հրապարակելու Պ-ի լուսանկարը, մասնավորապես հաշվի առնելով նաև այն, որ լուսանկարի հրապարակումը ինքնին իր անձնական կյանքի հետ կապված մանրամասներ չի բացահայտել: Հետևաբար միջամտությունը չէր բխում ճնշող հասարակական կարիքից:

Տեղի է ունեցել արտահայտվելու ազատության իրավունքի խախտում: